

և որ քաղաքացի իրորու հետ հաղորդակցութիւնը աւելցնելով և՛ անարհմիտութիւնը ։

Այսպէս արեւելահայկա ռուսականութեան (բողիկի) բարձրագոյն ժողովոյն անդամանուա նեցան հետեւեալ մեծայարգի անձինքը , այսինքն Ռէֆիք պէյ , Վէլի պէյ , Նէշէթ պէյ , Վաքիմ պէյ , Հիւսնի էֆէնտի , Սիդա էֆէնտի , այլև պարսկալը Վազարաթի և Չիլիկի . Ս . Վ որի խորհրդոյ քարտուղար և թարգման անուանեցաւ այս ժողովոյն ։

Այսպիսի տոնախմբութիւնը երէկ սկսաւ 'ի ձայն բազմութիւ թնդանութեան , և սովորական մեծ հանդիսիւ կը շարունակուի 'ի գործ դրուիլ ։ Իսրաբագոյն 'Իրան գրատունները գոց են այս տոնախմբութեանը պատճառաւ ։

Այլամոկից պաշտօնատուներ մեծ գործունէութեամբ կաշխատին նոր գրամատուղթ (գայմէ) շինելու . որ պիտի փոխուի հին գրամատուղթոց հետ ։ Իսկ հին գրամատուղթերը պիտի ժողովուին հասարակութեան ձեռքէն , 'յս գործողութիւնը ամէն հինգ տարի կը ըլլայ ։

Ռուսաց դեսպանատան առաջին թարգման և Ռուսիոյ օգոստոսիայի լայսեր այժմեան խորհրդական մեծայարգի պարոն Միխայիլ Բրիլլոբուրն ընկերութե ուրիշ երկու թարգմանաց , ամսոյս 20ին այցելութեան եկաւ ամենապատիւ տէր Յակոբ սրբազան Պատրիարքին , որուն հետ երկար ժամանակ բարեկամական տեսութիւն ըրաւ ։ Պարոն Միխայիլ Բրիլլոբուրն մեր Սրբազանէն արժանաւայել մարդասիրութիւն ընդունելէն ետեւ , հաշեցաւ մայր եկեղեցին մտնել . ուր բազում յարգանք և բարեպաշտութեամբ պտտեցաւ ։

Սեփականաւ խոստովանելով և յան պատրաստից ստանալով շնորհ պարոն Ռէֆիքի անցեալ շաբաթէ 'ի վեր Վաստանդնու պոլիս կը գտնուի . ուր քիչ մը ժամանակ պիտի մնայ կրօնէս ։

Միսոյս 27ին իշխանաց կղզւոյն շոգենաւը Վաստանդնու պոլիս նոր կամուրջը հասնելուն , ձանաւ սրահորդներէն մէկը շտապելով դուրս ելլել , ծովը ինկաւ և դժբաղդութե խղճուեցաւ ։

Միջեալ ամսոյ 16ին վսեմապաշտ Գառնի Զոհրապէս Միսոյսի որդւոյն ազնուազարմ Յարութիւն Պարեգին աղային հարսանեաց հանդէսը մեծ շքովե փառաւորութեամբ կատարեցաւ 'ի Պէշեթաշ ։ Յիշեալ ծաղկահասակ պայազատը , ինչպէս յայտնի է , ամուսնացաւ ազնու աշուք Տիւրահի օրիորդին հետ , որ պերճապատիւ Ղէզալիլեան Սիւրբի Վիսրայի բրոնզ աղծիկն է ։

Սոս Զեքեայի վսեմապաշտ հրաւիրեալ էին հայազգի և օտարազգի բազմութիւ երկ երկ անձինք , և ուրիշ շատ հանդիսականք ։ Պատկին խորհուրդը սուրբ եկեղեցւոյն մէջ գիշերը խիստ փառաւորութեամբ կատարեցաւ , ուր ներկայ էին Վաստանդնու պոլիս և սուրբ Նիկողայոսեան ամենապատիւ սրբազան Պատրիարքները , և նախորդ Պատրիարք գերապատիւ Սատթէոս սրբա

զան . որոնք եկեղեցական շքեղ զգեստով քզեւ տաւորեալ էին ։ Տատեան վսեմապաշտ Վիսրայից մարդասիրական հիւրասիրութիւնը և բարեհամբոյր վարմունքը մեծապէս աւելցուցին այս փառաւոր հարսանեաց շուքը . և բոլոր հանդիսականները շնորհակալութեամբ մեկնեցան մոտերիմ բարեմաղթութիւններ ընելով նորապսակ ազնուական ընտելաց երջանկութեանը համար ։

ՄՐՏԱՔԻԱ ԽԱՒԻՔ

ԱՄԳՂԻԱ . 17-29 Յուլիսի ։ Նրբե տարի կը ըլլայ որ մեծահամբաւ սեղանաւոր Ռոդ շիլո սեպուհը Սեփին Սիւրանիոյ ազգային երեսփոխանաց խորհրդարանին անդամ ընտրուեցաւ ։ Սեփին Սիւրանի ըստեւ բաղքին հասարակութե նէն . բայց կրօնի հրեայ ըլլալուն պատճառաւ մինչև ցայսօր չկրցաւ յիշեալ խորհրդարանը մտնել ։ Ստորոշներուն համբերութիւնը վերջաւորով որոշեցին , որ ամսոյս 14-26ին Ռոդ շիլո սեպուհը ընկերութեամբ բանի մը երեւելի անձանց ներկայանայ հասարակաց խորհրդարանին մէջ , և այնտեղ բազմելու իւր իրաւունքը պահանջէ ։ Ռուսի նշանակեալ օրը գնաց խորհրդարանը , բայց չուղեց 'յետարանին վրայ' ըստ սովորութեան միւս քրիստոնեայ անդամաց երգումը , այլ հին կտակարանին վրայ առաջարկեց երգելու ։ Սոս բանը սաստիկ վիճաբանութեան պատճառ տուաւ , անդամներէն մէկ բանին բողոքեցին թէ արժան չէ որ հրեայ մը , խորհրդարանին անդամ ըլլայ , և ուրիշ շատ առարկութիւններ յառաջ բերուեցաւ ։ Վերջապէս այս գործոյն որոշումը բանի մը օրէն ետեւ մնաց , 'իայց հասարակօրէն կը յուսացուի , թէ Ռոդ շիլո սեպուհը հին կտակարանին վրայ երգում ընելով պիտի ընդունուի հասարակաց խորհրդարանը ։

Վարդիսի փախտականները հրապարակական ժողով մը (սէպ) հաստատած էին 'ի Սեփին ժամանակէ մը 'ի վեր . այս ժողովոյն որանը կուս վարութեան հրամանաւը գոցուեցաւ ։

Վաղդիս նախորդ թագաւոր Սիւրիսի անողջութիւնը բարեօր վիճակի մէջէ . և շաբաթ մը իւր ընտանեօրը Սեփին մնալէն ետեւ , մեկնեցաւ 'ի Վէրմիս իւր բնակութիւնը երթալու ։

Հասարակաց խորհրդարանին մէջ ըստ Ռուսի և առաջարկեց որ հանգուցեալ Վեմարիճի դքսին գերեզմանին տարին 12000 լիւա սթէրլինգ (1,320,000 զուրուշ) հասոյթ տրուի ։

Վիզիլիական Ղէյսէր շոգենաւը , որ մօտ օրերս Բարեյուսոյ Հրուանդանէն եկաւ , հակառակ կրիայ մը (թօսպաղը) ընծայ բերաւ վեհափառ թագուհւոյն ։ Սոս կենդանւոյն հասակը 179 տարի է . որ կը հաստատուի վիշական թղթերով այն գերեզմանանց , որոց ձեռքը հետզհետէ անցեր է յիշեալ կրիան ։

ԳԱՅՂԻԱ . Փարիզ . 18-30 Յուլիսի ։ Վրդային երեսփոխանաց ժողովոյն և Հասարակապետութե գահերէցին մէջ մեծ տարաձայնութիւն և գժտութիւն կերեւի , որոց ինչ վախճան ու նենալը մէկը չկրնար գուշակեալ առայժմ . սակայն երկուստեք չկայ թէ խաղաղութեան և անդորրութեան նըշաններ չեն ։ Պատգամաւորներէն 'չտոտերը մեծ կասկած ունին և կրկինան , որ չըլլայ թէ գահերէցը փորձ փորձէ կառավարութեան կերպը փոխելու . այսինքն հասարակապետութիւնը կործանելով միապետական իշխանութիւն վարելու գէ իւր անուամբ . 'յս կասկածը ունիւր յայտնեցին պատգամաւորաց խորհրդարանին մէջ , բայց ներքին գործոց պաշտօնէյ մօտիւ Պարոն ապահովացոյց զխորհրդարանը , թէ այսպիսի փորձ մը երբէք պիտի չփորձուի , քանի որ այժմեան պաշտօնէաները (միլիտար) իրենց պաշտօնին մէջ պիտի գտնուին ։

Ստիկանութիւնը այս օրերս 40 հոգի բան տարկեց , որոնք ապստամբական ծածուկ գաշակեցութեան մը գլխաւորներն էին , և որոց քովը զանազան թղթեր գտնուեցան , որ այս չարամիտ ընկերութեան դիտաւորութիւնները , և հաստատած կանոնները կը յայտնեն ։ Սոս գաշակեցութեան անունը 'Էմբաիս' դրած են , որ վրէժխնդրութե ատուածուհի է ըստ դիցաբանութե ։

Փարիզի 'Ռոմա' անուն լրագրոյն դատաւար տուելէն ետեւ , փոխանակ լրագրոց յարձակումները և ընդդիմախօսութիւնները մեղմանալու և ստաւել զայրացան , և սաստկութեամբ կը մարտնչին իրենց հակառակորդաց դէմ ։

Յայտնի է որ աղային երեսփոխանաց ժողովը իւր անդամաց մեծագոյն մասին հաճութեք որոշեց որ օրէնսդիր խորհրդարանը իւր աշխատութիւններէն հանդէսը համար երեք ամիս գոց մնայ , սկսեալ օգոստոսի 11էն մինչև նոյեմբերի 11 , 'իայց սահմանադրութեան կանոնաց համաձայն , երբ որ խորհրդարանը կը գոցուի , իւր անդամներէն 25 հոգի կը նորոգուի , և այս ժողովը պատգամաւորաց խորհրդարանին փոխանորդութիւն կընէ , և հարկը պահանջելու ժամանակը իրաւունք ունի բոլոր երեսփոխանները գումարելու ։ Սոս 25 հոգին բուէտրիութե ընտրուեցաւ , որոց մէջ ոչ մօտիւ տը Սեփարանայէր , ոչ մօտիւ Վիլլիք և ոչ Ռուսիկոս Վանաբարէին ուրիշ բարեկամները կը տեսնուին , այլ գրեթէ ամէնքն ալ Հասարակապետութեան գահերէցին հակառակ են ։ Սոս դէպքը մեծ գրգռութիւն պատճառեց Վանաբարէան կուսակցութե մէջ , որոնք առայժմ լրագրոց միջոցաւ սաստիկ կը մարտնչին միւս կուսակցութեանց դէմ ։

ՏԱՆԻՄԱՐԳ . Սոս տէրութեան և Շէքիլիկ-Հոլշոյն գրութեանց մէջ զգած կոիւր բարեկամօրէն վախճան մը չկրնալով ընդունել , յուլիսի

անհաստատութեան . ափսոս . . . բայց գոնէ անհաստատութե գոհէր քան թէ փառասիրութե ։ Սեփին մարդ կային սրտին վատ այլ թշուառ աբար բնական խտորութե է . երկրորդը մարդուս իր վրայ ունեցած պանծալի պատասխանատուութեք գահիճը . կամ թէ որ կարեւր է ըստ բաւականին ասանկ բացատրելայս անարժանութիւնը մարդկութեան գէպի գաղտնութիւն տակալի այլ կերպութիւն մը ։

Նրբոր այս բանս ծերունիին պատմեցի ուսկայ իրեն զարմանք մը ցուցնել մարդկային սրտին անհաստատութեանը վրայ , գրուելը երեւցնելով դարձաւ ըստ ։

Չտեսնար այսօր նոյն բանը քու աչքիդ առջեւ . հոս անթիւ բազմութիւն մը կըլսուէր կը խնտար . հոս գերեզմաննոցի մէջ ուր գուցէ տարի մը կամ իրէք ամիս առաջ եկաւ թաղեց իր սիրելին . տեսնողը զինքը անմիտութե կը կարծէր ։ Հիմա իր սիրելին , իր բարեկամը , սրտին հատորը հողին տակը կը հանգչի , ու ինքը վրայէն կոխելով 'իանցին կ'երթայ ու միտքը չեղբեր որ կոխած տեղը ատենօք իր արցունքովը թրջած էր ։ Շտտերն սէ կան այս հողին տակը որ կենդանութե ատենին մահերէն կը փափաքէր ու երբ որ մեռան վրանին արցունքով ծածկեցին ։ Վիտնաս

որ այս աշխարհիս մէջ շատ մահերը կ'ուրան նման բաղդին ըրածին պէս , որ իր իւր տերեւներովը ծառը չորս կողմէն խղթրէն ետքը վրայէն իր պոկադարդը ու ձօն փունջերը չը ճախրու կըլալէ , Սիւր մարդ , այնպիսի դիւրաւ կըմտնանաւ աւան բան . բայց եկն շիտակը ըսէ , միայն բան մը չէս մօնար . ինչպէս պիտոր մօնարս ծննդենէ գիշկան հիմա հետգէ . . . Սիւր . ինչպէն երբ կարծես որ բեղի հետ պիտոր ըլլայ . ոչ , սորմէ տեւքեղի հետ ծնաւ , գիտնաս որ բեղի հետ պիտոր մեռնի . (թէ որ խիղճը երբէք կըմեռնի) . ինչպէն կեանքիդ վերջի կետը , ինչպէն գերեզմանդ բեզ պիտի չգէ . ինչպէն գերեզմանդ . . .

Սոս վերջի խօսքերը Օրեւոնին սաստիկ այլալըութեամբ մը կը զուլցէր ։

Վայա թէ ոչ ինչէն է - շարունակեց , - մարդուս սրտին անհանգստութիւնը իր ըրած գէշ գործքի մը վրայ . ինչո՞ւ առիւծը մարդը փառաւորէն ետքը կընստի հանգիստ կըքնանայ , ու մարդ երբ մարդասպան կ'ըլլայ չարաչար կըտանը ջուրի ։ Հեղեղը իր անտանձ ընթացքին մէջ արմաւ տարիւր կ'առնէ կըտանի ծառը , ու անոր մէջի ծածկված երգիչը կը թռչի կերթայ ուրիշ գաւառ . օտար երկնքի մը տակ հնչեցնելու իր սովորական տաղը . ոչ հեղեղը գիտէ իրեն ասպատակ ըլլալը ,

ոչ ծուրը իր կործանման պատճառը , և ոչ թրուշանը իր փոխադրութեանը վրայ տխրութիւն մը կը գայ ։ Իայց մարդ . . .

Նոյն ատենը իրիկվան անուշ հովը մեր գլխուն վրայի ծառերուն ստերը երեւցնելով , աշնանային գեղեցիկ տերեւները կ'առնէր կըտանէր ։ Օրեւոնին գէպի անոնց նայելով ըստ ։

Արտեսնաս սա աշնանային գեղեցիկ տերեւները ինչպէս հովը զիրեք կ'առնէ կըտանի ու անյայտ կըլլան ։ Վտեսնար առաւօտեան ձիւնափայլ ցողով ու արեւուն ճառագայթներովը զարդարված կը փափաքային . ատենօք ուսակը անոնց ծոցը քաշված . կ'երգէր արշալոյսին դարձը , կամ տխուր ճառողանքով մը մեռելով ողոր . հիմա կը թափին . . . ու տակին ձայնը չուրիւր ։ Սոսնի իմ օրերս երբեմն ուրախ , երբեմն տխուր , անցան գաւցին . անցան իմ օրերս տերեւներու նման . բայց սրտիս ձայնը , հոգւոյս տխուր կ'եռ կըլսուի , չգաղբի իմ թշուառութիւններս երգելէն , 'ստուծոյ աղթելէն ինծի համար , ինծի հետ եղողներուն , ինձմէ առաջ անցած կամ ինձմէ ետքը գալիքներուն համար ։

13-25ին ստորին պատերազմաւ իրորու զարնու ե-
ցան այս երկու համառակորդ կառավարութեց
բանակները : Տանկմարդի զօրաց թիւը 38 հազար
հոգիի կը հասնէր , իսկ Շէքիլինկ-Հուլչայի զօր-
ութեանց բանակը 28 հազար հոգիէ բաղկաց-
եալ էր : Երկու կողմէն խիստ կատաղութեամբ
պատերազմեցան , և ահագին արեւահեղու թիւն
ըլլալէն ետեւ , յիշեալ զքսութեանց զօրքը յաղ-
թուեցան և ստիպուեցան ետ քաշուիլ : Տանկ-
մարդացիք Շէքիլինկ քաղաքին տիրեցին , և
Հուլչայի քաղաքն ալ առնելու վրայ էին :
Վերջին լուրերուն համեմատ կերելի թէ մեծ
տեքու թիւները մէջերէն որոշում մը ըրած են
այս գործոյն համար , զոր մօտօրէրս պիտի հրատա-
րակենք : Այս որոշման զօրութեամբը յիշեալ եր-
կու զօրութիւնները Տանկմարդի տեքու թեան
ներքեւ պիտի մնան , ինչպէս որ էին առաջուց :

ԱՄԵՐԻԿԱ . Վաշինկոնթըն եկած վերջի լու-
րերը կը ծանուցանեն , թէ Միացեալ Նահանգաց
գահերէց Վայլըր զօրապետը յա լիսի 9ին առա-
ւօտուն ըստ նոր տուժարի մեռաւ ի Վաշինկոն-
տայրաքաղաքը՝ քոլեճայի հարուածով : Վայլըր
զօրապետը 60 տարեկան էր , իւր մահը խիստ
հանդարտ եղաւ , և իւր վերջի խօսքը ասանք էին
«Պատրաստ եմ . ջանացի իմ պարտքս կատարել» :
Այս առաքինի անձին յանկարծահաւ մահուան
վրայ ոչ միայն Վերիկայիները , այլև բոլոր Լե-
րոպա կը ցաւին . քանզի գլխաւորապէս իւր զին-
ուորական արժանատիութեամբը և իւր բաժու-
թեամբը ոտուցաւ այս բարձր պաշտօնը , և միան-
գամայն խոհեմ քաղաքագէտ և բարեկամ էր
բարեկարգութեան և խաղաղութեան :
Միացեալ Նահանգաց սահմանադրութեան
համեմատ գահերէցի փոխանորդ եղող միտոր
Պիլմորը Հաստորակապութեան գահերէց ան-
ուանեցաւ : Իստ սովորութեան առջի պաշտօնեա-
ները իմբովին հրաժարեցան իրենց պաշտօնէն ,
Վրանս թէ նոր գահերէցը հազիւ թէ անոնցմէ
1-2 հոգին նորէն պաշտօնի պիտի հրաւիրէ :
Նոր Լորքէն յուլիսի 5-17էն գրուած նա-
մակները կը ծանուցանեն , թէ Նոր Օրլէանի մէջ
վառօգի և բորակի (կեօվերիլէ) շտեմարան մը
կրակ առնելով , ահագին հրկիզութիւն մը պատա-
հեր է : Չորս հարիւրի չափ տուն և շատ վա-
ճառք մոխիր դարձեր են . այլև 35 հոգի զոհ ե-
ղեր է այս դժբաղդ դիպուածոյն . որուն պատ-
ճառած վնասը 5 միլիոն ֆրանքի կը հասնի կըսեն :

ԻՏԱԼԻԱ . Հռոմ , 18-30 Յուլիսի : Կրօնական
միաբանութիւնները անհանգստութեան մէջ են
Օրիօլի կարտինալին հրատարակած չղջաբերական
թղթոյն համար : Այս հրամանագրով՝ Հռոմի
կառավարութիւնը կուզէ իմանալ թէ կրօնական
միաբանութիւնները որչափ անշարժ ստացուածք
և որչափ դրամագլուխ ունին , որոց վրայ օրինա-
ւոր հարկ մը պիտի դնէ : Յայտնի է որ մինչև
ցայսօր եկեղեցականաց ստացուածքը ամէն
տուրքերէ ազատ էին , և ըստորում Հռոմի վեճա-
կաց մէջ ստացուածոց մէկ մեծ մասը եկեղեցա-
կանաց կը վերաբերին , ուստի բնականապէս կա-
ռավարութեան ամէն տուրքերը խեղճ աշխար-
հականաց վրայ կը ծանրանան , Այս նոր բարեկար-
գութիւնը խիստ բարի ազդեցութիւն մը ըրաւ
հասարակութեան վրայ :

ԱՒՍՏՐԻԱ . Վէննա . 6 Օգոստոսի ըստ նոր
տուժարի : Իրաքովայի սոսկայի հրդեհին պատ-
ճառած դժբաղդութիւնները քիչ մը մեղմացնե-
լու համար մասնաւոր ընկերութիւն մը հաստա-
տեցաւ յիշեալ մայրաքաղաքը . որ մարդասեր
անձանց կամաւոր նուէրը ընդունելով՝ կրակէ
եւ լողներուն կարօտութիւնները պիտի հոգայ :
Իաց յայտնանէ Վատրիոյ օգոստոսի փառ կայսրը
հաճեցաւ իւր մասնաւոր քսակէն 30.000 ֆիորին
օգնութիւն ընելու յիշեալ հրկիզելոց . այլև կա-
ռավարութիւնը 50.000 ֆիորին սահմանեց այս
դժբաղդներուն բաժնու ելու համար :
Վրոյնուան Վէննայի մէջ կը գտնուի առայժմ
և անպակաս զօհեր կընէ , բայց և այնպէս հա-
սարակորէն կը յուսացուի , որ այս անգամ իւր սովո-
րական սոսկայի հետեւութիւնները պիտի չունենայ :

ՅՈՒՆԱՍՏԱՆ . Լիւնք . 8 Օգոստոսի ըստ նոր
տուժարի : Այս մայրաքաղաքէն հասած լուրերը
նշանակու թեան արժանի են : Լիւնքին գործոց
տեսուչ պարոն Լիւնտոյր , և կրօնի ու հասարակաց
գաղափարական թեան տեսուչ պարոն Լիւնտայէլըն
իրենց հրաժեշտը մատուցին թագաւորին . որ
յօժարամտութեամբ ընկալաւ : Կոտանդնու պօրոյ
նախորդ գետպան պարոն Տէրիւանին՝ արտաքին
գործոց պաշտօնեայ եղաւ և առայժմ կրօնի
պաշտօնատարութիւնն ալ իրեն յանձնուեցաւ :
Լիւնք արու թեան պաշտօնատարութիւնը ժամա-
նակի մը համար ներքին գործոց պաշտօնեայ պա-
րոն Լիւնքարային տրուեցաւ :
Թագաւորը իւր առաջին թեանը համար , մօտ
օրերս ճանապարհորդութիւն մը պիտի ընէ Եւ-
րոպա . ուստի Վիլլի թագաւորին յանձնուեցաւ
թագաւորական փոխանորդութիւնը՝ հաճութե-
օրերակուտին և պատգամաւորաց ժողովոյն :

ՅԱՆՈՒՅԱՆ ԵՄԵՐ

Նիցեալ ուրբաթ օր Տաճկաց Պայրամի տօնա-
խմբութիւնը սովորական հանդիսիւ սկսաւ և ե-
րբ օր տեւեց կատարեալ հանգստութեամբ : Նաւա-
հանգիստը գտնուած Օսմանեան պալէք , որ զա-
նազան դրօշակներով զարդարուած էր՝ բազմաթիւ
թիւրանութիւններ արձակեց ի պատիւ տօնախմբու-
թեան . այլև բոլոր հիւպատոսարանները իրենց
գրօշները բարձրացուցած էին :

Նիցեալ շաբթու գրեցի Հայ գործաւոր մը
Ֆրանկաց թաղը ծովը մտեր է որ լուացուի . բայց
չգիտնալով որ մտած տեղը խորունկ է , ջրոյն մէջ
ընկղմեւ է . և երբոր դուրս հաներ են ամենեւին
կենդանութեան նշան մը չունէր վրան : Վնիլա-
պէս այս խեղճ անձը Հռոմէականաց հիւանդա-
նոցը կը տանին որուն հոգաբարձուն շնորհիւ
բժիշկը՝ առանց ժամանակ անցնելու , հարկաւոր
զարմանը ի գործ դնելով , մարդը կազատի ի
մահուանէ : Նշուշտ մեծ շնորհակալութիւն կը պար-
տաւորիմք ազգովին այս մարդասիրութեամբ համար :
Վիլ շաբթու Տաճկի նաւակ մը ճանապար-
հորդներով բռնաւորուած՝ դիմացի ծովեզերքը
(գարշեբաք) երթալու ատենը ընկղմեցաւ : Վր-
հաստատեն թէ 4-5 ճամբորդ խղուեր են :

Չորեքշաբթի գիշեր՝ մամը 9ին տասը վայր-
կեան միտցած ըստ եւրոպացւոց՝ երկրաշարժու-
թեան թեթեւ յնդում մը գլխացիք :
Վասապայէն կը գրեն , թէ յիշեալ գիւղաքա-
ղաքին մօտ Բարչն ըստած գեղին մէջ Հիւսէյին
պէյ անուամբ Տաճկին օգնութեամբ իւր
ծառային չարաչար սպաններ է Մանիսացի Հայ
պարկէշտ անձ մը՝ Նէլիլ օղլու Վստուածատուր
անուն : Այս խեղճ երիտասարդը առնելիք ունի
եղեր յիշեալ գեղեւնագործէն , որ խարդախութե-
ամբ իւր տունը բերել կուտայ պարտքս վճարեմ
ըսելով . բայց դրամ տալու տեղը , ատրճանակը
վրան կը պարպէ , և գնտակը պարտէն մտնելով
բամակէն կը լիւն : Մեռելոյն գիւղը Վասապա-
բերին և թաղեցին . իսկ մարդասպանները ձեռք
անցնելով Մանիսա յուղարկուեցան :

Վալթայի Նիգդիական դպրոցին հարցաքննու-
թեան հանդէսը յուլիսի 9ին և 10ին ըստ նոր
տուժարի արժանաւոր շքով կատարեցաւ դպրո-
ցին մէկ բակին (ալիուլի) մէջ , զոր խիստ գեղե-
ցիկ զարդարեր էին Լեւոպայի գլխաւոր ազգաց
շքեղ դրօշակներով : Բազմաթիւ ունեւորներ ,
որոց մեծագոյն մասը աշակերտաց ծնողքը և բա-
րեկամներն էին , ներկայ գտնուեցան այս հանդի-
սին մէջ՝ մանուսանգ երկրորդ օրը , և մասնաւոր
ուշադրութիւն մատուցին :

Ուսանողները և աշակերտները , որոց թիւը 52
հոգիի կը հասնի , յուլիսի 9ին հարցաքննեցան հե-
տեւեալ գիտութեանց վրայ . Սրբազան պատ-
մութիւն , Մաթեմատիք , Թուաբանութիւն ,
Վեճեպրա , Կոտորակները , Լայլն , Լատիներէն ,
Յունարէն , Գողգիարէն , Իտալերէն , Տաճկե-
րէն և Բրապերէն :

Յուլիսի 10ին եղած հարցաքննութեան նիւ-
թերը հետեւեալներն էին . Վստուածաբանութիւն ,
Վշխարհագրութիւն , Բարոյական փիլիսոփայու-

թիւն , Նիգդիական քերականութիւն , Վստա-
բաշխութիւն , Քիմիականութիւն , Լայլն ,
Վշակերտները ըստ մեծի մասին արժանաւոր
պատասխաններ տուին այս բազմաթիւ նիւթոց
վրայ . եղած հարցմանցը , և հետեւեալ բոլոր
հանդիսականները գոհ եղան դպրոցին յառաջա-
դիմութեանը վրայ : Վրաւոր աշակերտները հա-
մառօտ ատենաբանութիւններ և ոտանաւորներ
կարգացին դանազան լեզուով , և ունեւորաց ծա-
փահարութեանը արժանի եղան : Յետ այնորիկ
պարգեւաբաշխութիւն եղաւ յառաջագէմ աշա-
կերտաց , և դպրոցին գողգիարցի վարժապետը
բարեկրթութեան թեան վրայօք ազգու ատենաբանու-
թեամբ մը ցուցուց թէ որչափ ամենահարկաւոր
բան է մարդոյս բարոյական , բնական և մտաւո-
րական կարողութիւնները միանգամայն զարգա-
ցնելու հոգ տանիլ իւր ներկայ և ապագայի եր-
ջանկութեան համար : Այս պատուական հանդէսը
որուն շուքը կաւեցրէր պատուական նուագա-
րանաց ներդաշնակութիւնը , վերջացաւ շքեղ ու
փառաւոր հացկերոյթով , ուր հրաւիրեալ էին
երեւելի հանդիսականները և աշակերտները :

ՆՈՐԱՌՈՅՆ ԼՈՒՐԵՐ

Թրեւտի շուգեւաւով , որ երեկ կէսօրէն ետեւ
հասաւ , Լիւնտնէն լուրեր ընկալաւ յուլիսի 19-
31 ամսաթուով , և Փարիզէն օգոստոսի 3 ամսա-
թուով ըստ նոր տուժարի :

Պարոն տը Ռոգշիւրը Հին Կտակարանին վրայ
հաւատարմութեան երգում ըրեր է հասարակաց
խորհրդարանին մէջ . բայց սովորական երգման
մէջ հետեւեալ խօսքը կար՝ «քրիստոնէական ճշմա-
րիտ հաւատոյն վրայ» : Այս խօսքը պարոն Ռոգ-
շիւր չուզելով զրուցել , նորովի ճաբանութիւն ծագե-
ցաւ , և գործոյն օրոշումը ուրիշ օրուան մնաց :

Վիլ օրերս Պիլմիլիկէ մի մէջ պատուաւոր
կերպիւ հագուած մարդ մը բռնեցին , որ քովը
15.000 լիւա սթէրլինի արժողութեամբ Վէննայի
դրամասեղանի խարդախ դրամաթուղթ ունէր :

Վրհաստատեն թէ խորհրդարանը օգոստոսի
17ին կամ 19ին ըստ նոր տուժարի պիտի դոյուի ,
իւր աշխատութիւններէն հանգչելու համար :
Փարիզի լուրերը յաջող չեն : Պատերազմի
պաշտօնէին և Շանկարիէ զօրապետին մէջ եղած
տարաձայնութիւնը կը շարունակուի , և աւելա-
լու վրայ է Վեճամիշ զօրապետը Վերսայի մէջ
հաստատուելու զօրաց բանակին հրամանատար
անուանեցաւ : Սօսիլ Վիլլըր Պրուսել գնաց
Մեդեալի իշխանին հետ տեսնուելու համար :
Վրհաստատեն թէ Հասարակապետութեան գա-
հերէցը նոր ճանապարհորդութիւն մը պիտոր ընէ ,
և մինչև Լիւն պիտի երթայ :

ՎԵՃԵՄԵՐԵՆԻ ԼՈՒՐԵՐ

Վաղաքիս առուտուրը ըստ մեծի մասին հա-
նարտութեան մէջ է . միայն աֆիսներ կու գուի .
և 102 զուրուշի ծախուեցաւ չէքին : Ղուսամը
ևս կու գուի , ու 20 հազար քիլի չափ վաճառե-
ցաւ , (տակաւին սպորանքը չհասած) 28 1/2 - 30
զուրուշի , նաւուն մէջ աւանդելու պայմանաւ :
Թորաթի սալեպը 27 զուրուշի հօխան դիւրալիս-
ճառ է , նմանապէս յիշեալ քաղաքին անխոնք
7 զուրուշի կը ծախուի : Պայամպուրի մետաքսին
հօխան 125 զուրուշի է : Գարիլին վերջի գինը 7 1/2
7 1/2 զուրուշի է , նաւուն մէջ աւանդելու պայ-
մանաւ : Տորանը՝ 200-215 զուրուշի կենդինարը
ըստ տեսակին դժուարաւաճառ է : Չէթին գինը
225-230 զուրուշի է կենդինարը : Նիգդիլի փա-
րամուսը 70-72 զուրուշի կը ծախուի , երկրորդ-
տեսակը՝ 52-54 : Շաբարին գինը՝ 185-190 զու-
րուշի է կենդինարը :

Վերաց Դրամադիւն-Թեան :

Լիւնտն	110 1/2 - 110 1/2 - 111
Վարիլիա	173
Թրեւտ	371

Հրատարակիչ և տէր լրագրոյն .
Վահագն Վ . Պալատաբեկ :
Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՎԵԼԱՅՍ ՈՅՆ ԱՐԱՐԱՏ ԵԱՆ